ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

քաղաք Երևան **«27» մարտի 2024թ.**

2024 թվականի մարտի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) հերթական նիստը:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության հաշվետվության, ինչպես նաև 2024 թվականի մարտի 11-ին վարչապետի գլխավորությամբ կայացած տեսչական մարմինների 2023 թվականի հաշվետվության քննարկման ժամանակ բարձրացված հարցերի քննարկում.

2. Տեսչական մարմնի հաստիքացուցակում և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ հարցի քննարկում.

Քվեարկությանը մասնակցեցին՝

Գ. Սանոսյան – ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ),

Տ.Պետրոսյան – ՀՀ ներքին գործերի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ,

Տ. Հակոբյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ,

Ա. Ավանեսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

Ե.Վարդանյան – Քաղաքաշինության կոմիտեի նախագահ,

Ն.Տերյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ,

Ս. Թովմասյան – Կադաստրի կոմիտեի ղեկավար,

Տ. Բաբայան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության» ներկայացուցիչ,

Դ. Սողոմոնյան - «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու,

Ս. Հովսեփյան - «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»-ի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Քվորում առկա է: Խորհրդը հաստատեց օրակարգը:

Օրակագարգում ընդգրկված 1-ին հարցը ներկայացրեց Տեսչական մարմնի ղեկավար Գ.Խաչատրյանը, խորհդրի կողմից քննարկվեց Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության հաշվետվությունը և բարձրացված հարցերը:

Օրակագարգում ընդգրկված 2-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների «10» կողմ «0» դեմ համամասնությամբ հավանություն տվեց Տեսչական մարմնի հաստիքացուցակում և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելուն:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Գ. Սանոսյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Վ. Պոկացյան**